տուրքի գումարը նախապես վճարված լինելը, դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189-րդ, 191-192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Նառ-Ավ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի՝ «Նառ-Ավ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 14.06.2024 թվականին կայացած թիվ 3265-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Դանիել Միսեյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am